



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՇՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը Լ

### ԱՆԴԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԴԱՐՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան

25 նոյեմբերի 2011թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Վ. Հովհաննիսյանի  
Անդամակցությամբ՝ Վ. Պողոսյանի  
Ա. Դեգլոսյանի

Ուսումնասիրելով «ԱՆԴՎ» ՍՊԸ-ի անհագրական դիմումով գործը քննության  
ընդունելու մասին հարցը,

### ԴԱՐՅԵՅ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «ԱՆԴՎ» ՍՊԸ-ն 07.11.2011թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով. «... «Տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 7-րդ կետը ճանաչել ՀՀ Սահմանադրության 8-րդ, 33.1-րդ և 32-րդ հոդվածների պահանջներին հակասող և անվավեր»:

Դիմողը գրնում է, որ վիճարկվող դրույթով զգալիորեն սահմանափակվում են տնտեսավարող սուբյեկտների կողմից ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային փրանսպորտով կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնելու՝ օրենսդրությամբ չարգելված գործունեությամբ զբաղվելու՝ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքը, նույնիսկ նման գործունեություն իրականացնելու համար հարուկ թույլգվության՝ լիցենզիայի առկայության դեպքում:

Դիմողը կարծում է, որ նույնիսկ օրենքով սահմանված լիցենզիայի առկայության պարագայում տնտեսավարող սուբյեկտը չի կարող անարգել իրականացնել այն գործունեությունը,

որի համար ունի օրենքով փրված թույլպվություն, ինչի արդյունքում խախսվում է անձի՝ ՀՀ Սահմանադրության 8-րդ, 33.1-րդ և 32-րդ հոդվածներով երաշխավորված գնդեսական գործունեության ազարության, օրենքով չարգելված ձեռնարկագիրական գործունեությամբ զբաղվելու և աշխարհանքի ընդունության ազարության հիմնարար իրավունքները և Էականորեն սահմանափակվում է ազար գնդեսական մրցակցությունը:

Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և դեկավարվելով «Սահմանադրական դարարանի մասին» ՀՀ օրենքի 32 և 69-րդ հոդվածների պահանջներով, կարծում ենք, որ գործի քննությունը սահմանադրական դարարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պարճառաբանությամբ.

ա/ Վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատելու համար նախեւառաջ անհրաժեշտ է այն դիբարկել վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված այլ դրույթների համապեքսպում: Այսպես, վիճարկվող դրույթը սահմանում է, որ ընդհանուր օգբագործման ավտոմոբիլային փրանսպորտով ուղեւորների կանոնավոր փոխադրումներն իրականացնում են միայն մրցութային եղանակով ընդրված կազմակերպությունները և անհար ձեռնարկագիրերը: Մրցույթի անցկացման կարգը սահմանում է ՀՀ կառավարությունը: Այսինքն՝ օրենսդիրն ընդհանուր օգբագործման ավտոմոբիլային փրանսպորտով ուղեւորների կանոնավոր փոխադրումների իրականացման մրցույթի անցկացման կարգը սահմանելու լիազորությունը հարակորեն վերապահել է ՀՀ կառավարությանը՝ դրանով իսկ վերջինիս լիազորելով լուծելու այդ մրցույթի իրականացման հետ կապված բոլոր հարցերը, որոնք պետք է բխեն օրենքից և չհակասեն դրան: Մյուս կողմից, «Ավտոմոբիլային փրանսպորտի մասին» ՀՀ օրենքը որպես ավտոմոբիլային փրանսպորտի ոլորպում պետրական կարգավորման առանձին ձև սահմանում է ավտոմոբիլային փրանսպորտի բնագավառում գործունեության առանձին փեսակների լիցենզավորում, որի նպարակն է սպառողների իրավունքների պաշտպանությունը, ապրանքների և ծառայությունների որակի բարձրացումը, զարգացող շուկայական հարաբերությունների կարգավորմանը նպաստելը, անձի կյանքին, առողջությանն առավել վրանգի սպառնալիքով հղի գործունեության դեսակներով զրադարձությունների նկարմամբ հսկողության իրականացումը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի հոդվածների: Կառավարության 16.08.2001թ. թիվ 762 որոշման համաձայն՝ ուղեւորափոխադրումներ իրականացնելու հավակնություն ունեն այն կազմակերպությունները, որոնք ունեն ճանապարհային ոսպիկանություն հաշվառված սեփականության /կամ/ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով օգբագործման իրավունքով ձեռք բերված ավտոբուսներ կամ միկրոավտոբուսներ: Իսկ մրցույթին մասնակցելու համար, ի թիվս այլ պայմանների, նախարեսավում է նաև ընդհանուր օգբագործման ավտոմոբիլային փրանսպորտով ուղեւորների կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիայի առկայություն: Այսինքն՝ լիցենզիայի առկայությունն անհրաժեշտ,

սակայն միակ չափանիշը չէ, որպեսզի համապարասխան կազմակերպությունը լիազորություն ունենա իրականացնելու կանոնավոր ուղետրափոխադրումներ: Այս առումով, դիմողի փաստարկներն առ այն, որ նույնիսկ օրենքով սահմանված լիցենզիայի առկայության պարագայում տնտեսավարող սուբյեկտը չի կարող անարգել իրականացնել այն գործունեությունը, որի համար ունի օրենքով դրված թույլտվություն, ակնհայտ անհիմն են, եւ վիճարկվող դրույթն այս համարեքսպում սահմանադրավական վեճ չի առաջացնում,

թ/ դիմումին կցված դադարական ակդերի եւ դիմողի փաստարկների համալիր վերլուծությունը վկայում է, որ կոնկրետ տվյալ դեպքում դիմողի համար առաջացած անբարենպաստ հանգամանքներն ընդամենը նրա նկարմամբ կայացված համապարասխան դադարական ակդերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթի սահմանադրավականությունը վիճարկելով՝ դիմողը, ընդամենը, բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրավականության վիճարկմամբ:

Դիմք ընդունելով ՀՀ սահմանադրավան դադարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՆ-21 որոշման մեջ արդահայփած իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրավականության հարցը, ըստ եռության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրավան դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրավան դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, ինչպես նաև դեկավարվելով «Սահմանադրավան դադարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ կետերով եւ 69-րդ հոդվածի 7-րդ մասով, ՀՀ սահմանադրավան դադարանի կանոնակարգի 26-րդ հոդվածով՝ ՀՀ սահմանադրավան դադարանի թիվ 1 դադարական կազմը

### **ՈՐՈՇԵՅ.**

«ԱՆԴԱՎ» ՍՊԸ-ի անհապական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

